# <u>Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն</u>

***ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ***

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է <ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՇՀԱՊՁԲ-7/14> ծածկագրով ՇՀ ընթացակարգի արդյունքում 02.03.2015թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/14-2 ծածկագրով պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) հիման վրա 30.01.2017թ. կնքված № 2 Համաձայնագրում (այսուհետև՝ Համաձայնագիր) 2017թ-ի հուլիս 18-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

***Փոփոխության պատճառ:*** Պայմանագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշել են Համաձայնագրի վճարման ժամանակացույցում կատարել փոփոխություն:

***Փոփոխության նկարագրություն:*** Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն և նախատեսել կանխավճար 240 000 000 /երկու հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամի չափով, ընդ որում, Գնորդը սույն փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո 5 բանկային օրվա ընթացքում նշված գումարը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ: Որոնք ներկայացված է սույն փոփոխությանը կից № 1 Հավելվածով:

***Փոփոխության հիմնավորում:*** Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 9.4 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշման 60-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ: Պայմանագրով կողմերի փոխադարձ պարտավորությունները դեռ չեն ավարտվել:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության բաժնի գլխավոր մասնագետ,ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Տ. Բաղդասարյանին:

**Հեռախոս՝ <u>010-29-43-53;</u>**

**Էլ. փոստ՝ t.baghdasaryan@mil.am:**

**Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:**

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ № 4**
**№ ԾՀԱՊՁԲ-7/14-2ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 18.07.2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "ԷԼԻՏ ԿԱՊԻՏԱԼ" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա.Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 02.03.2015թ. կնքված № ԾՀԱՊՁԲ-7/14-2 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.4 կետը և 30.01.2017թ. կնքված № 3 Համաձայնագիրը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին :

1. **Փոփոխության առարկան**
2.

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն և նախատեսել կանխավճար 240 000 000 /երկու հարյուր քառասուն միլիոն/ ՀՀ դրամի չափով, ընդ որում, Գնորդը սույն փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո 5 բանկային օրվա ընթացքում նշված գումարը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ: Որոնք ներկայացված է սույն փոփոխությանը կից № 1 Հավելվածով:

2.Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5 | «Էլիտ Կապիտալ» ՍՊԸ |
| ՀՀ ֆինանսների նախարարության | ք.Երևան,Միրաքյան 23, շին 8 |
| աշխատակազմի գործառնական վարչություն | «Արմսվիսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 250 001 021 337 0100 |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 01246073 |
| ՀՀ պաշտպանության նախարարության | |
| ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ | տնօրեն |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ |

Հավելված N 1 N ՇՀԱՊՁԲ-7/14-2 ծածկագրով գնման պայմանագրի թիվ 4 Փոփոխության

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**մինչև փոփոխությունը**

| h/h | Գնման առարկան | CPV կոդ | *Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. Ըստ ամիսների բայց ոչ ուշ քան 10.12.2017թ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտ | հոկտ | նոյեմբ | դեկտեմբ |
| 1 | Խոզի միս | 15113500/1/4/3 | 66325000 | 132650000 | 198975000 | 265300000 | 331625000 | 397950000 | 464275000 | 601328980 | 601328980 |

*Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*

**թիվ 4 փոփոխությամբ**

ՀՀ դրամ

| h/h | Գնման առարկան | CPV կոդ | *Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. Ըստ ամիսների բայց ոչ ուշ քան 10.12.2017թ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտ | հոկտ | նոյեմբ | դեկտեմբ |
| 1 | Խոզի միս | 15113500/1/4/3 | 66325000 | 132650000 | 198975000 | 465737800.8 | 492500601.5 | 519263402.3 | 546026203 | 601328980 | 601328980 |

*Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*

**ԳՆՈՐԴ**

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ
ք.Երևան,Միրաքյան 23, շին 8
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 250 001 021 337 0100
ՀՎՀՀ 01246073

տնօրեն

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ